



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

03.12.2021թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/103**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ԳԱԱ «Ա. Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային
սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
Բողոք բերող՝ «Գեո-Նալ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Գեո-Նալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Միքայելյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵԻՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, մշտապես
գործող ռեֆերենց կայանների ընդունիչի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ
քննող անձ), քննության առնելով «Գեո-Նալ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից
08.11.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու «ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04» ծակագրով գնման ընթացակարգը,

2. Հետագայում նոր մրցույթ հրավիրելու դեպքում՝ հանել մրցակցային անհավասարություն առաջացնող սահմանափակումները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.11.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 05.11.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/18164-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 08.11.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

09.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/103 համարի ծածկագիրը:

16.11.2021թ.-ին և 03.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.12.2021թ.-ին:

2. «Գեո-Նալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գեո-Նալ» ՍՊԸ-ն 08.11.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2021-10-27թ gnumner.am կայքում հրապարակվում է ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար մշտապես գործող ռեֆերենց կայանների ընդունիչի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04» ծածկագրով ընթացակարգի հայտարարությունն և հրավերը: Վերոհիշյալ հրավերի հայտարարության տեխնիկական բնութագրով պահանջվող պարամետրերի մասնագիտական ուսումնասիրությունը, մեր մասնագետներին թույլ է տրվել գալ այն եզրահանգմանը, որ հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է սուբյեկտիվորեն՝ կոնկրետ արտադրողի, կոնկրետ գործիքի պարամետրերին համապատասխան: Պատվիրատուն ակնհայտ կերպով սահմանափակել է հավասար մրցակցային պայմաններ բոլոր մասնակիցների համար՝ բացառելով ոլորտի այլ

ներակայացուցիչների մասնակցությունը: Ցանկանում ենք անդրադառնալ տեխնիկական բնութագրում առկա պահանջներին՝

Չափաբաժին 1: Նավիգացիայի և տեղանքի որոշման գլոբալ համակարգեր (gps կամ համարժեք)

Մասնավորապես ցիտում ենք հրավերում ներկայացրած տեխնիկական պահանջները առանց խմբագրման.

/Ընդունիչը պետք է ունենա առնվազն 600 ալիք, պետք է կարողանա միառժամանակ հեղուկ բոլոր արբանյակներից եկող առկա ազդանշաններին՝ այդ թվում նաև այն արբանյակային ազդանշաններին, որոնք մակնշված են որպես ՎԱՏ, պետք է կարողանա արբանյակներին հեղուկ 0 աստիճան բարձրության անկյան տակ, պետք է ունենա բավարար քանակով ֆիզիկական և անկախ ալիքներ, որպեսզի կարողանա ընդունել բոլոր պահանջված ազդանշանները: / և

/Ընդունիչը պետք է աջակցի դիրքի և կարգավիճակի ներմուծման ու արտահանման մասին ինֆորմացիան NMEA-0183 արձանագրության միջոցով, պետք է ապահովի տվյալների ելք մինչև 100 Hz հաճախականությամբ, պետք է ապահովի մեկ պուլս մեկ վայրկյանում (PPS) ելք, պետք է ապահովի արտաքին իրադարձությունների ներմուծում, պետք է աջակցի արտաքին օդերևութաբանական կայաններ ու թեքության սենսորներ: /

Վերոնշյալ երկու պահանջները միառժամանակ կարող է բավարարել միայն մեկ սարք՝ Trimble Alloy GNSS Reference Receiver-ը, որի տեխնիկական բնութագիրն էլ հիմք է հանդիսացել ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04 ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրի համար:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու ԵՒՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04 ծակագրով գնման ընթացակարգը.

2. Հետագայում նոր մրցույթ հրավիրելու դեպքում՝ հանել մրցակցային անհավասարություն առաջացնող սահմանափակումները:

«Գեո-Նալ» ՍՊԸ-ն 16.11.2021թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«1. Ցանկանում ենք փաստել, որ մեր նկատարումը վերաբերվում է ոչ թե տեխնիկական բնութագրի անճշտություններին, այլ իրավական բնույթի խախտմանը: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը՝ պատվիրատուն ակնհայտ սահմանափակել այլ

մասնակիցների համար մասնակցության իրավունքը և հրավերում գրված ապրանքի տեսնական բնութագիրը կազմել հիմնվելով սուբյեկտիվ պահանջից ելնելով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի Հոդված 13-ի 2-րդ մասի 1 և 2 կետերը խախտվել են.

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

2. Անդրադառնալով Պատվիրատուի՝ ի դեմս տնօրեն Զոն Կարապետյանի, նամակին որտեղ նա փաստում է երկրորդ սարքի համապատասխանության մասին. Մեջբերում ենք++՝ «Անդրադառնալով բողոքի բուն առարկայի՝ տեղեկացնեմ, որ նմանփայ պահանջների բավարարող գործիք, օրինակ, ունի նաև իտալական Stonex ընկերությունը, որի SC2200 մոդելի ընդունիչը բավարարում է հրավերով սահմանված պահանջներին:» Ներկայացված երկրորդ սարքը արդեն իսկ չի համապատասխանում տեխ. բնութագրի հետևյալ պահանջներին: Ստորև ներկայացնում ենք մեր հայտնաբերած անճշտությունները՝ պատվիրատուի պատասխան-նամակում ներկայացված սարքի հետ կապված.

1. Չի ապահովում նամիգացիոն արբանակալին համակարգերից հետևյալներն՝ GPS L2E, GLONASS L1P, L2A, L3CDMA, GALILEO L1CB0C

2. Ընդունիչի էկրանը պետք է լինի պտտվող, որպեսզի պատկերի վարյի ինֆորմացիան հնարավոր լինի նորմալ ընթերցել: Մինչդեռ պատվիրատուի կողմից ներկայացված սարքը չունի պտտվող էկրան:

3. Հրավերում պահանջվող ապրանքը պետք է լինի ամբողջությամբ հերմետիկ՝ IP68 սերտիֆիկացված, Stonex SC2200-ը ունի IP67 սերտիֆիկացում:

4. Սարքը պետք է ներառի Երկակի թեժ փոխարինելի լիցիում իոնային տեսակի մարտկոցներ՝ լիցքավորման մակարդակի ցուցիչով: Մինչդեռ Stonex SC2200 աշխատում է 1-7,2 վ 13600 Mah մարտկոցով:

Ստորև ներկայացված նկատառումները վերաբերում են այլեհավաքին:

5. GLONASS G1 G2 G3 համակարգեր գոյություն չունեն:

6. Խեղդողակի տեսակը՝ մշակված NASA-ի ռեակտիվ շարժիչների լաբորատորիայի (Jet Propulsion Laboratory-JPL) Կողմից, որը նվազեցնում է բազմուղի միջամտությունները:

7. Ալեհավաքի տրամագիծը պետք է լինի առնվազն 35 սմ, իսկ քաշը՝ ոչ ավել 4,5 նշված չէ ինչից: Տվյալ տրամագծին համապատասխանում է Stonex SA1800, որի քաշը 10,5 կգ է:

8. Ջերմային դիսպազոնը $-40 +85$, խոնավությունը մինչև 100% Stonex SA1800՝ ապահովում է 95%:»:

3. ՀՀ ԳԱԱ «Ա. Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 09.11.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/18330-2021 գրությամբ դիմել է ՀՀ ԳԱԱ «Ա. Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գեո-Նալ» ՍՊԸ-ի կողմից 08.11.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 11.11.2021թ.-ին թիվ 2453-86 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 09.11.2021թ. գրության, հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԳԱԱ «Ա. Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը սույն գնման գործընթացը իրականացնում է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից 2021 թվականի հայտարարված Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Մաթեմատիկական երկրաֆիզիկայի և գեոինֆորմատիկայի» ծրագրի, բացի այդ հայ-չինական «երկրաշարժերի մշտադիտարկում և մոդելավորում» միջազգային լաբորատորիայի շրջանակներում:

Նշված ծրագրի նպատակն է ՀՀ տարածքում իրականացնել երկրադինամիկական գիտակիրառական հետազոտություններ, ՀՀ կառուցել ռազմավարական նշանակության համալիր սեյսմաբանական և երկրադինամիկական հատուկ ցանց, հետազայում նպատակ ունենալով ընդգրկվելու միջազգային ցանց: Իրականացվող ծրագրի շրջանակում

նախատեսվող գործողություններն ունեն կարևոր ռազմավարական նշանակություն, ինչպես ՀՀ, այնպես էլ տարածաշրջանային իմաստով, քանի որ առնչվում է հազարավոր մարդկանց կյանքի և ունեցվածքի պահպանության հետ, բացի այդ խնդիր է դրված լուծել երկրաշարժերի օպերատիվ կանխատեսման միջազգային մակարդակի հիմնախնդիրը, ինչպես նաև գնահատել ՀՀ տարածքում առկա երկրաշարժերի հետևանքով առաջացած խզումնագոյացման բնույթը և ակտիվությունը:

Ելնելով մեր կողմից կատարվող աշխատանքների և ուսումնասիրությունների խիստ մասնագիտական բնույթից և կարևորությունից՝ մեր՝ գործունեության համար անհրաժեշտ գործիքների նկատմամբ պահանջները նույնպես շատ սպեցիֆիկին են, բացի դա բոլոր հարցերը համաձայնեցված են միջազգային մասնագետների (Չինաստան, Ռուսաստան և այլ երկրներ) հետ:

Ցանկանում եմ նշել, որ խնդրո առարկա գործիքակազմը և դրանց նկատմամբ պահանջները ձևակերպելիս մեր մասնագիտական խումբը առաջնորդվել է մեր կարիքների բավարարման համար մաքսիմալ համապատասխան գործիքներ և ծրագրային փաթեթներ ունենալու սկզբունքով:

Խնդրում եմ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ մեր կողմից խնդրո առարկա հրավերում ձեռք բերվելիք սարքավորումը հանդիսանալու է մեր կողմից ստեղծվող համակարգի մի մաս, և վերոնշյալ պահանջները սահմանելիս հաշվի ենք առել նաև ձեռք բերվելիք սարքավորումը համակարգի այլ սարքավորումների և ծրագրային փաթեթների հետ ներդաշնակ աշխատելու հանգամանքի վրա, օրինակ՝ «պեյք է աջակցի արտաքին օդերևութաբանական կայաններ» պահանջը: Մեր գործառույթներին մաքսիմալ համապատասխան գործիքներ և ծրագրային փաթեթներ ձեռք բերելու կարիքի գնահատման նպատակով մեր կողմից կատարվել է բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրություն, որին մասնակից են դարձել նաև վերոնշյալ ծրագրի շրջանակներում մասնակցող արտասահմանյան մեր մասնագետ գործընկերները, որոնք ունեն նշված բնագավառում երկարամյա մասնագիտական փորձառություն և կարողություն , բացի դրանից նրանց կողմից ապագայում (2022 թ.) Aid ծրագրի շրջանակներում « տրամադրվելու են նմանափայ սարքավորումներ, որոնց համաստեղությունը ապահովելը դրված է մեր ՊՈԱԿ-ի վրա:

Անդրադառնալով բողոքում նշված այն հիմնավորմանը, մեջբերում եմ, «Ընդունիչը պեյք է ունենա առնվազն 600 ալիք, պեյք է կարողանա միառժամանակ հետևել բոլոր արբանյակներից եկող առկա ազդանշաններին՝ այդ թվում նաև այն արբանյակային

ազդանշաններին, որոնք մակնշված են որպես VUS, պետք է կարողանա արբանյակներին հետևել 0 աստիճան բարձրության անկյան տակ, պետք է ունենա բավարար քանակով ֆիզիկական և անկախ ալիքներ, որպեսզի կարողանա ընդունել բոլոր պահանջված ազդանշանները», «Ընդունիչը պետք է աջակցի դիրքի և կարգավիճակի ներմուծման ու արտահանման մասին ինֆորմացիան NMEA-0183 արձանագրության միջոցով, պետք է ապահովի տվյալների ելք մինչև 100 Hz հաճախականությամբ, պետք է ապահովի մեկ պուլս մեկ վայրկյանում (PPS) ելք, պետք է ապահովի արտաքին իրադարձությունների ներմուծում, պետք է աջակցի արտաքին օդերևութաբանական կայաններ ու թեքության սենսորներ» կնշենք, որ հետևյալ երկու պահանջներին միաժամանակ կարող է բավարարել մեկ սարք, և համապատասխան պահանջներին բավարարող 2-րդ սարքավորում գոյություն չունի:

Կրկին անգամ ցանկանում եմ փաստել, որ մենք գործիքների և ծրագրային փաթեթների վերաբերյալ պահանջները ձևակերպելիս ելել ենք մեր կողմից իրականացվող գործունեությանը և մեր կարիքներին մաքսիմալ համապատասխանող ապրանք ձեռք բերելու գաղափարից և չենք կատարել կոնկրետ սարքավորումների պարամետրերի զուտ փոխնիական համեմատություն: Այդ առումով ցանկանում եմ նշել, որ, եթե նույնիսկ կոնկրետ մատակարարի կարծիքով մեր կողմից ներկայացված պահանջներում առկա է եղել խոչընդոտ, փարընթերցում, հստակեցման, պարզաբանման անհրաժեշտություն, ապա նա օրենքով նշված կարգով և ժամկետներում հնարավորություն է ունեցել պարզաբանման համար դիմելու և հանգամանքների վերաբերյալ հարցը բարձրացնելու համար, ինչը, չգիտես ինչու, չի կատարվել:

Անդրադառնալով բողոքի բուն առարկային՝ տեղեկացնեմ, որ նմանատիպ պահանջների բավարարող գործիք, օրինակ, ունի նաև իտալական Stonex ընկերությունը, որի SC2200 մոդելի ընդունիչը բավարարում է հրավերով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից, ինչպես և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ հրավերով սահմանված գործիքի արագ ձեռք բերումը կարևոր նշանակություն ունի մեր ՊՈԱԿ-ի բնականոն գործունեության, ՀՀ փարածքի սեյսմիկ անվտանգության ապահովմանը, քանի որ սարքը տեղադրվելու է սեյսմիկ տեսանկյունից ամենա վտանգավոր ՀՀ հյուսիսային փարածքում և միջազգային գործընկերների հետ մեր փոխադարձ պարտավորություններ ապահովման համար՝ խնդրում եմ մերժել ներկայացված Բողոքը և հնարավորության փալ շարունակել գնման գործընթացը:»:

Պատվիրատուն 19.11.2021թ.-ի թիվ 2453-90 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ ս.թ. նոյեմբերի 11-ին թիվ 2453-86 ինստիտուտը հայտնել է իր դիրքորոշումը GNSS սարքի բողոքի վերաբերյալ: Սարքի տեխնիկական բնութագրերը ներկայացվել է առաջնորդվելով ՀՀ-ում, ինստիտուտում և միջազգային համագործակցության շրջանակներում փոխհամաձայնեցված, հաստատված ծրագրերի լուծվելիք խնդիրների առանձնահատկություններից ու պահանջներից:

Ելնելով վերոգրյալից, խնդրում ենք կայացնել համապատասխան որոշում:»:

4. ԳԲԲԱ-LO-2021/103 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ԳԱԱ «Ա. Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից մշտապես գործող ռեֆերենց կայանների ընդունիչի ձեռքբերման նպատակով 27.10.2021թ.-ին հայտարարվել է «ԵԻՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ին չափաբաժնի մասով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը

1	38111130	Նավիգացիայի և տեղանքի որոշման գլոբալ համակարգեր (gps կամ համարժեք)	<p>Մշտապես գործող ռեֆերենց կայանի լրակազմ</p> <p>GNSS տեխնոլոգիա եվ ազդանշաններին հետևելու բնութագրիչները:</p> <p>Ընդունիչը պետք է կարողանա հետևել բոլոր ազդանշաններին բոլոր հասանելի հաճախականությունների վրա՝ հետևյալ գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգերից (համաստեղություններից). GPS: L1 C/A, L2E/L2P, L2C, L5; GLONASS: L1 C/A, L1P, L2 C/A, L2P, L3 CDMA; GALILEO: L1 CBOC, E5A, E5B, E5AltBOC, E6; BEIDOU: B1, B2, B3;</p> <p>Ընդունիչը պետք է կարողանա հետևել բոլոր ազդանշաններին բոլոր հասանելի հաճախականությունների վրա հետևյալ գլոբալ նավիգացիոն արբանյակներով աշխատող օգմենտացիոն համակարգերից (SBAS): EGNOS: L1 C/A; MSAS: L1 C/A; WAAS: L1 C/A, L5;</p> <p>Ընդունիչը պետք է ունենա առնվազն 600 ալիք, պետք է կարողանա միառժամանակ հետևել բոլոր արբանյակներից եկող առկա ազդանշաններին՝ այդ թվում նաև այն արբանյակային ազդանշաններին, որոնք մակնշված են որպես ՎUS, պետք է կարողանա արբանյակներին հետևել 0 աստիճան բարձրության անկյան տակ, պետք է ունենա բավարար քանակով ֆիզիկական և անկախ ալիքներ, որպեսզի կարողանա ընդունել բոլոր պահանջված ազդանշանները: Ալիքների դինամիկ բաշխումը ֆիզիկական ալիքների չի կարող համարվել ընդունելի փոխարինող տարբերակ, պետք է հնարավորություն ունենա միացնելու և անջատելու ցանկացած ծածկագրի և կրիչի բազմուղի մերժման կամ մեղմացման տեխնոլոգիա:</p> <p>Ներմուծման եվ արտահանման ֆորմատներ</p> <p>Ընդունիչը պետք է կարողանա աջակցել ներմուծման և արտահանման համար իրական ժամանակում ուղղելի հետևյալ ֆորմատները.</p> <p>RTCM 2.x տարբերակներ և RTCM 3.x տարբերակներ՝ այդ թվում նաև MSM մեկը յոթ հաղորդագրությունների միջոցով; CMR և CMR+;</p> <p>Դիտարկելիների համար ընդունիչը պետք է աջակցի հետևյալ իրական ժամանակի ֆորմատները. RTCM 3.x՝ այդ թվում նաև MSM մեկը յոթ հաղորդագրությունների միջոցով, BINEX; Ընդունիչի պատենտավորված ֆորմատ</p> <p>Ընդունիչը պետք է աջակցի դիրքի և կարգավիճակի ներմուծման ու արտահանման մասին ինֆորմացիան NMEA-0183 արձանագրության միջոցով, պետք է ապահովի տվյալների ելք մինչև 100 Hz հաճախականությամբ, պետք է ապահովի մեկ պուլս մեկ վայրկյանում (PPS) ելք, պետք է ապահովի արտաքին իրադարձությունների ներմուծում, պետք է աջակցի արտաքին օդերևութաբանական</p>
---	----------	---	--

			<p>կայաններ ու թեքության սենսորներ:</p> <p>Չափումներ եվ տեղորոշում</p> <p>Ընդունիչը պետք է ապահովի դիֆերենցիալ, իրական ժամանակում կինեմատիկ և ստատիկ հետմշակումով տեղորոշում՝ օգտագործելով ոլորտի արդյունաբերական ստանդարտ ֆորմատներ, պետք է ապահովի ստատիկ հետմշակումով տեղորոշում. Հորիզոնական՝ 3մմ + 0.1ppm RMS և – Ուղղահայաց՝ 3.5մմ + 0.4 ppm</p> <p>Ընդունիչը պետք է ապահովի իրական ժամանակում կինեմատիկ տեղորոշում 30 կմ-ից պակաս միակ բազային գծով հետևյալ ճշտությամբ. Հորիզոնական՝ 8 մմ + 1 ppm RMS, Ուղղահայաց՝ 15 mm + 1 ppm RMS</p> <p>Ընդունիչը պետք է ապահովի իրական ժամանակում կինեմատիկ տեղորոշում RTK լուծումով հետևյալ ճշտությամբ. Հորիզոնական՝ 8 mm + 0.5 ppm RMS, Ուղղահայաց՝ 15 mm + 0.5 ppm RMS:</p> <p>Ընդունիչը պետք է աջակցի իրական ժամանակում ներկառուցված բացարձակ ճշգրիտ կետ-դիրքավորմամբ տեղորոշում (PPP) ինտերնետ պրոտոկոլների (IP) և L-Band արբանյակային առաքմամբ:</p> <p>Ֆիզիկական եվ շրջակա միջավայրում աշխատելու պարամետրեր</p> <p>Ընդունիչը պետք է ներառի դիսիլեյ էկրանով ու ֆիզիկական ստեղնաշարով: Ստեղները պետք է լինեն լուսավորվող մթության մեջ տեսանելի լինելու համար, Ընդունիչի էկրանը պետք է լինի պտտվող, որպեսզի պատկերի վրայի ինֆորմացիան հնարավոր լինի նորմալ ընթերցել, եթե ընդունիչը տեղադրված լինի գլխիվայր, Ընդունիչի դիսիլեյը պետք է թույլ տա կատարել ընդունիչի բազային կարգավորումներ՝ այդ թվում նաև ցանցի կոնֆիգուրացիայի պարամետրերի, ալեհավաքի մոդելի, բարձրության, տեղադիրքի և կայանի անվան հետ կապված, Ընդունիչի քաշը չպետք է գերազանցի 2 կգ-ը՝ առնվազն մեկ մարտկոցի հետ միասին, Ընդունիչը պետք է համապատասխանի շրջակա միջավայրում աշխատելու հետևյալ պարամետրերին.</p> <p>Աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C-ից մինչև +65°C, Խոնավությունը՝ 100% կոնդենսացիա, Ամբողջությամբ հերմետիկ՝ IP68 սերտիֆիկացված, Հարվածակայունություն՝ 1 մետր բարձրությունից կոշտ մակերևույթի վրա:</p> <p>Սնուցման բնութագրիչները եվ կառավարումը</p> <p>Ընդունիչը պետք է առաջարկի առնվազն երկու սնուցման կետ՝ հաստատուն և</p>
--	--	--	---

			<p>փոփոխական հոսանքներով աշխատելու համար՝ 9.5-ից 28 Վոլտ հաստատուն հոսանքի միջակայքում, պետք է աջակցի Power over Ethernet (PoE) 802.3af (տիպ 1) և 802.at (տիպ թ 2) համակարգեր՝ որպես սնուցում ապահովելու միջոց: PoE- ն պետք է թույլ տա օգտագործողին կարգավորել այս ֆունկցիան՝ այն միացնելու կամ անջատելու համար, հոսանքի սպառումը պետք է լինի 5.5 Վատտից պակաս, երբ այն հետևում է բոլոր արբանյակների ազդանշաններին ու երբ ակտիվ է WiFi կապը, պետք է ունենա «հոսանքը միացնել» և «հոսանքն իջեցնել» ֆունկցիա՝ օգտագործողի կողմից լարումը կարգավորելու հնարավորությամբ, պետք է ներառի երկակի «թեժ փոխարինելի» լիթիում իոնային տեսակի մարտկոցներ՝ լիցքավորման մակարդակի ցուցիչով, մարտկոցները պետք է կարողանան աշխատեցնել սարքն առանց արտաքին սնուցման՝ մինչև 12 ժամ հոսանք մատակարարելով: Այս գործառույթը պետք է կարգավորվի օգտագործողի կողմից, պետք է ունենա ինտեգրված լիցքավորիչ ներքին մարտկոցի լիցքավորման համար՝ կարգավորելի նվազագույն մուտքային լարումով, ինտեգրված լիցքավորիչը պետք է լինի կարգավորելի, որպեսզի հնարավորություն լինի կարգավորել, թե երբ պետք է լիցքավորվի մարտկոցը: Հասանելի օպցիաները հետևյալն են.</p> <p>Լիցքավորել, երբ ընդունիչը ՄԻԱՑՎԱԾ կամ ԱՆՋԱՏՎԱԾ է, Լիցքավորել, երբ ընդունիչը ՄԻԱՑՎԱԾ է, Լիցքավորել, երբ ընդունիչն ԱՆՋԱՏՎԱԾ է, Երբեք չլիցքավորել մարտկոցները:</p> <p>Տվյալների գրանցում</p> <p>Ընդունիչը պետք է ունենա ներկառուցված (չհեռացվող) հիշողության կոշտ սկավառակ մինչև 24 Գբ ծավալով, պետք է կարողանա ընդունել արտաքին հիշողության սարք՝ տվյալների գրանցման մինչև 1 տբ ծավալով, պետք է ապահովի տվյալների գրանցման իրական հաճախականություն 100 Հերցը մինչև 600 վայրկյան: Տվյալների գեներացումն արհեստական մեթոդներով չի համարվում իրական այլընտրանք, պետք է ապահովի 180 Հց-ից ավելի արագությամբ տվյալների գրանցման համակցված հաճախականություն՝ գրանցման բոլոր անկախ սեանսներով, պետք է ապահովի 12 անկախ և համաժամանակյա սեանսներ, պետք է կարողանա թողարկել ինչպես RINEX, այնպես էլ BINEX ֆորմատի ներքին ֆայլեր՝ առանց արտաքին գործիքների/փոխարկիչների անհրաժեշտության:</p> <p>Կոմունիկացիան ինտերֆեյսներ</p> <p>Ընդունիչը պետք է ներառի առնվազն չորս ֆիզիկական սերիական պորտեր: Սերիական պորտերի հաբը կամ ադապտորները, որոնք միացված են ընդունիչի ֆիզիկական պորտերին, չեն կարող համարվել իրական այլընտրանք,</p>
--	--	--	--

			<p>պետք է ունենա առնվազն մեկ USB պորտ, որն ապահովում է հեռավար ցանցային դրայվերի ինտերֆեյսի (RNDIS) բնութագրեր՝ սարքի և հոսթի ռեժիմներում, պետք է ունենա WiFi 802.11 b/g կապ՝ հոսթ և մուտքային կետ ռեժիմներ: WiFi կապը պետք է ապահովի WPA/WPA2/WEP64/WEP128 կոդավորում: WiFi կապը մուտքային կետի ռեժիմում պետք է թույլ տա ընդունիչի բոլոր հատկանիշների, դատա ֆայլերի և դատա հոսքերի TCP/IP կոնֆիգուրացիա, պետք է ներառի 2.4 GHz Bluetooth ռադիո, որն ապահովում է մինչև երեք համաժամանակյա կապուղի, պետք ա ունենա կոմունիկացիոն պորտ, որն ապահովում է 10MHz արտաքին հաճախականությամբ մուտք, պետք է ունենա առնվազն տաս եզակի TCP/IP պորտ: «Եզակի» նշանակում է, որ մեկ բազմահաղորդիչ TCP/IP պորտը (որը թույլ է տալիս բազմակի միացումներ) համարվում է միայն 1 TCP/IP պորտ: Յուրաքանչյուր պորտ պետք է լինի ամբողջությամբ անկախ կարգավորելի այլ պորտերից և էլքերից, TCP/IP պորտերը պետք է ապահովեն օգտագործողի դատագրամների արձանագրություն (User Datagram Protocol - UDP), կլիենտ և սերվեր կապեր. TCP/IP պորտերը պետք է ապահովեն ծածկագրային պաշտպանություն, պետք է ներառի առնվազն երեք անկախ NTRIP կլիենտներ, պետք է ներառի առնվազն երեք անկախ NTRIP սերվերներ, պետք է ներառի առնվազն երեք անկախ NTRIP քսսթերներ, որոնք կապահովեն առնվազն 30 տարբեր NTRIP ծածկագրային մուտեր, պետք ունենա լիովին կարգավորելի FTP սերվեր: Այն պետք է ապահովի FTP REST հրաման:</p> <p>Անվտանգություն</p> <p>Ընդունիչը պետք է ունենա անվտանգ ցանցային կապ (անվտանգ նշանակում է կոդավորված, վավեր սեսիա), ինչպես նաև պետք է ապահովեն տարատեսակ մուտքային աստիճաններ դեպի ընդունիչի հսկիչները, պետք է ապահովի IP ֆիլտրացում մուտքային կապերի համար, պետք է աջակցի TLS v.1.2, պետք է հնարավորություն ունենա լինել կարգավորելի՝ օգտագործելու համար սովորական TLS սերտիֆիկատներ:</p> <p>Համակարգային առանձնահատկություններ</p> <p>Ընդունիչը պետք է ունենա հնարավորություն լինելու կարգավորելի առանց օգտագործելու որևէ տեսակի ծրագրակազմի, որոնք հանդիսանում են այլ կողմերի սեփականություն, պետք է ունենա իր մեջ ներդրված վեր էջի տեսքով ինտերֆեյս և լինի համատեղելի առկա վեբ բրաուզերների մեծ մասի հետ (Mozilla Firefox, Google Chrome և այլն): Ընդունիչի վեբ ինտերֆեյսը պետք է լինի համատեղելի շարժական սարքերի վեբ դիտարկիչների տարբերակների հետ, վեբ ինտերֆեյսը պետք է պարունակի օգնության</p>
--	--	--	---

			<p>կամ տեղեկատու հղումներ՝ համատեքստին զգայուն ընտրացանկերի տեսքով:</p> <p>Երաշխիք</p> <p>Ընդունիչը պետք է ունենա առնվազն մեկ տարվա երաշխիք՝ սկսած ձեռք բերման օրվանից, պետք է ունենա ծրագրային ցմահ թարմացումներ՝ առանց տեխնիկական սպասարկման պայմանագրեր գնելու անհրաժեշտության, Պահանջվող բոլոր ֆունկցիաները և հատկությունները պետք է լինեն մշտական:</p> <p>Խեղդողակներով GNSS ալեհավաք մշտապես գործող ռեֆերենց կայանների համար</p> <p>Պահանջվող բնութագրիչները պետք է համապատասխանեն ամբողջությամբ և առանց բացառությամբ վերջին պաշտոնական պրոդուկտին և/կամ ծրագրակազմին, որը թողարկվել է այս տեղերի հայտարարման օրվա դրությամբ:</p> <p>Ստոր ներկայացված հաճախականություններին հետևող գեոդետիկ ալեհավաքներ. GPS: L1, L2, L5; GLONASS: G1, G2, G3; GALILEO: E1, E5ab, E6; BEIDOU: B1, B2, B3;</p> <p>Ալեհավաքը պետք է համապետելի լինի հետևյալ SBAS-ներին: EGNOS, WAAS, QZSS, GAGAN, MSAS:</p> <p>Ալեհավաքը պետք է համատեղելի լինի ճշգրտող ծառայությունների հետ, որոնք հեռարձակվում են L-band-ի միջոցով,</p> <p>Խեղդողակի տեսակը՝ մշակված NASA-ի Ռեակտիվ շարժիչների լաբորատորիայի (Jet Propulsion Laboratory - JPL) կողմից, որը նվազեցնում է բազմուղի միջամտությունները:</p> <p>Ֆազային կենտրոնի կայունությունը՝ ավելի լավ, քան 2 մմ-ը, Ֆազային կենտրոնի կրկնությունը՝ ավելի նվազ, քան 1 մմ, Հետևելու նվազագույն բարձրությունը՝ 0 աստիճան, Հետևելու գործնական բարձրությունը՝ < 5 աստիճանից, Ալեհավաքի հզորացում: > 45 db ± 2db. Տրամագիծը՝ առնվազն 35 սմ, Քաշը 4.5-ից պակաս, Պետք է հասանելի լինի բացարձակ ճշգրտման ֆայլ IGS-ից (ANTEX ֆորմատ), Սնուցվում է ընդունիչի կողմից՝ 3.5-ից 20 Վոլտ հաստատուն հոսանքով, Անվանական դիմադրությունը՝ 50 Օհմ. Ալեհավաքը գործելու է խոնավության, ուժեղ քամիների, ավազամրրիկի և ուժեղ անձրևների պայմաններում, Ջերմաստիճանային դիապազոնը՝ -40°C - +85°C. Խոնավությունը՝ մինչև 100%. Հարվածակայունությունը՝ 1 մետր բարձրությունից կոշտ մակերևույթին, Վիբրացիոն դասը՝ 4 GRMS, պատահական վիբրացիայի պրոֆիլ միայն Z առանցքի վրա, Coaxial միակցիչ՝ N էզ, Մոնտաժային դետալ՝ 5/8" - 11 էզ, Ըստ ցանկության, պետք է հասանելի լինի նաև</p>
--	--	--	--

				<p>ալեհավաքի լրացուցիչ արտաքին երեսպատիչ (обтекатель), Ալեհավաքի ճշգրտող ֆայլը և արտաքին երեսպատիչի փաթեթը պետք է հասանելի լինեն IGS-ից (ANTEX ֆորմատ):</p> <p>GNSS ալեհավաքի մալուխ մշտապես աշխատող ռեֆերենց կայանների համար</p> <p>Երկարությունը՝ 30 մետր, Համալիր դիմադրողականությունը՝ 50 Օհմ, Մաքսիմալ հաճախականությունը՝ առնվազն 10 GHz. Կորուստը 1.5GHz-ի վրա՝ 0.2 dB/ր-ից պակաս. Մալուխը աշխատելու է խոնավության, ուժեղ քամիների, ավազամրրիկի և ուժեղ անձրևների պայմաններում:</p>
--	--	--	--	--

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Գեո-Նալ» ՍՊԸ-ի կողմից 08.11.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում

ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ

նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ... կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր

մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ԳԱԱ «Ա. Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից մշտապես գործող ռեֆերենց կայանների ընդունիչի ձեռքբերման նպատակով 27.10.2021թ.-ին հայտարարված «ԵԻՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման

պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ին չափաբաժնի մասով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը
1	38111130	Նավիգացիայի և տեղանքի որոշման գլոբալ համակարգեր (gps կամ համարժեք)		<p>Մշտապես գործող ռեֆերենց կայանի լրակազմ</p> <p>GNSS տեխնոլոգիա եվ ազդանշաններին հետեվելու բնութագրիչները:</p> <p>Ընդունիչը պետք է կարողանա հետևել բոլոր ազդանշաններին բոլոր հասանելի հաճախականությունների վրա՝ հետևյալ գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգերից (համաստեղություններից)․ GPS: L1 C/A, L2E/L2P, L2C, L5; GLONASS: L1 C/A, L1P, L2 C/A, L2P, L3 CDMA; GALILEO: L1 CBOC, E5A, E5B, E5AltBOC, E6; BEIDOU: B1, B2, B3;</p> <p>Ընդունիչը պետք է կարողանա հետևել բոլոր ազդանշաններին բոլոր հասանելի հաճախականությունների վրա հետևյալ գլոբալ նավիգացիոն արբանյակներով աշխատող օգմենտացիոն համակարգերից (SBAS): EGNOS: L1 C/A; MSAS: L1 C/A; WAAS: L1 C/A, L5;</p> <p>Ընդունիչը պետք է ունենա առնվազն 600 ալիք, պետք է կարողանա միառժամանակ հետևել բոլոր արբանյակներից եկող առկա ազդանշաններին՝ այդ թվում նաև այն արբանյակային ազդանշաններին, որոնք մակնշված են որպես ՎԱՏ, պետք է կարողանա արբանյակներին հետևել 0 աստիճան բարձրության անկյան տակ, պետք է ունենա բավարար քանակով ֆիզիկական և անկախ ալիքներ, որպեսզի կարողանա ընդունել բոլոր պահանջված ազդանշանները: Ալիքների դինամիկ բաշխումը ֆիզիկական ալիքների չի կարող համարվել ընդունելի փոխարինող տարբերակ, պետք է հնարավորություն ունենա միացնելու և անջատելու ցանկացած ծածկագրի և կրիչի բազմուղի մերժման կամ մեղմացման տեխնոլոգիա:</p> <p>Ներմուծման եվ արտահանման ֆորմատներ</p> <p>Ընդունիչը պետք է կարողանա աջակցել ներմուծման և արտահանման համար իրական ժամանակում ուղղելի հետևյալ ֆորմատները․ RTCM 2.x տարբերակներ և RTCM 3.x տարբերակներ՝ այդ թվում նաև MSM մեկը յոթ</p>

			<p>հաղորդագրությունների միջոցով; CMR և CMR+; Դիտարկելիների համար ընդունիչը պետք է աջակցի հետևյալ իրական ժամանակի ֆորմատները. RTCM 3.x՝ այդ թվում նաև MSM մեկը յոթ հաղորդագրությունների միջոցով, BINEX; Ընդունիչի պատենտավորված ֆորմատ</p> <p>Ընդունիչը պետք է աջակցի դիրքի և կարգավիճակի ներմուծման ու արտահանման մասին ինֆորմացիան NMEA-0183 արձանագրության միջոցով, պետք է ապահովի տվյալների ելք մինչև 100 Hz հաճախականությամբ, պետք է ապահովի մեկ պուլս մեկ վայրկյանում (PPS) ելք, պետք է ապահովի արտաքին իրադարձությունների ներմուծում, պետք է աջակցի արտաքին օդերևութաբանական կայաններ ու թեքության սենսորներ:</p> <p>Չափումներ եվ տեղորոշում</p> <p>Ընդունիչը պետք է ապահովի դիֆերենցիալ, իրական ժամանակում կինեմատիկ և ստատիկ հետմշակումով տեղորոշում՝ օգտագործելով ոլորտի արդյունաբերական ստանդարտ ֆորմատներ, պետք է ապահովի ստատիկ հետմշակումով տեղորոշում. Հորիզոնական՝ 3մմ + 0.1ppm RMS և – Ուղղահայաց՝ 3.5մմ + 0.4 ppm</p> <p>Ընդունիչը պետք է ապահովի իրական ժամանակում կինեմատիկ տեղորոշում 30 կմ-ից պակաս միակ բազային գծով հետևյալ ճշտությամբ. Հորիզոնական՝ 8 մմ + 1 ppm RMS, Ուղղահայաց՝ 15 mm + 1 ppm RMS</p> <p>Ընդունիչը պետք է ապահովի իրական ժամանակում կինեմատիկ տեղորոշում RTK լուծումով հետևյալ ճշտությամբ. Հորիզոնական՝ 8 mm + 0.5 ppm RMS, Ուղղահայաց՝ 15 mm + 0.5 ppm RMS:</p> <p>Ընդունիչը պետք է աջակցի իրական ժամանակում ներկառուցված բացարձակ ճշգրիտ կետ-դիրքավորմամբ տեղորոշում (PPP) ինտերնետ պրոտոկոլների (IP) և L-Band արբանյակային առաքմամբ:</p> <p>Ֆիզիկական եվ շրջակա միջավայրում աշխատելու պարամետրեր</p> <p>Ընդունիչը պետք է ներառի դիսփլեյ էկրանով ու ֆիզիկական ստեղծաշարով: Ստեղծները պետք է լինեն լուսավորվող մթության մեջ տեսանելի լինելու համար, Ընդունիչի էկրանը պետք է լինի պտտվող, որպեսզի պատկերի վրայի ինֆորմացիան հնարավոր լինի նորմալ ընթերցել, եթե ընդունիչը տեղադրված լինի գլխիվայր, Ընդունիչի դիսփլեյը պետք է թույլ տա կատարել ընդունիչի բազային կարգավորումներ՝ այդ թվում նաև ցանցի կոնֆիգուրացիայի պարամետրերի,</p>
--	--	--	---

			<p>ալեհավաքի մոդելի, բարձրության, տեղադիրքի և կայանի անվան հետ կապված, Ընդունիչի քաշը չպետք է գերազանցի 2 կգ-ը՝ առնվազն մեկ մարտկոցի հետ միասին, Ընդունիչը պետք է համապատասխանի շրջակա միջավայրում աշխատելու հետևյալ պարամետրերին.</p> <p>Աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C-ից մինչև +65°C, Խոնավությունը՝ 100% կոնդենսացիա, Ամբողջությամբ հերմետիկ՝ IP68 սերտիֆիկացված, Հարվածակայունություն՝ 1 մետր բարձրությունից կոշտ մակերևույթի վրա:</p> <p>Սնուցման բնութագրիչները եվ կառավարումը</p> <p>Ընդունիչը պետք է առաջարկի առնվազն երկու սնուցման կետ՝ հաստատուն և փոփոխական հոսանքներով աշխատելու համար՝ 9.5-ից 28 Վոլտ հաստատուն հոսանքի միջակայքում, պետք է աջակցի Power over Ethernet (PoE) 802.3af (տիպ 1) և 802.at (տիպ թ 2) համակարգեր՝ որպես սնուցում ապահովելու միջոց: PoE- ն պետք է թույլ տա օգտագործողին կարգավորել այս ֆունկցիան՝ այն միացնելու կամ անջատելու համար, հոսանքի սպառումը պետք է լինի 5.5 Վատտից պակաս, երբ այն հետևում է բոլոր արբանյակների ազդանշաններին ու երբ ակտիվ է WiFi կապը, պետք է ունենա «հոսանքը միացնել» և «հոսանքն իջեցնել» ֆունկցիա՝ օգտագործողի կողմից լարումը կարգավորելու հնարավորությամբ, պետք է ներառի երկակի «թեժ փոխարինելի» լիթիում իոնային տեսակի մարտկոցներ՝ լիցքավորման մակարդակի ցուցիչով, մարտկոցները պետք է կարողանան աշխատեցնել սարքն առանց արտաքին սնուցման՝ մինչև 12 ժամ հոսանք մատակարարելով: Այս գործառույթը պետք է կարգավորվի օգտագործողի կողմից, պետք է ունենա ինտեգրված լիցքավորիչ ներքին մարտկոցի լիցքավորման համար՝ կարգավորելի նվազագույն մուտքային լարումով, ինտեգրված լիցքավորիչը պետք է լինի կարգավորելի, որպեսզի հնարավորություն լինի կարգավորել, թե երբ պետք է լիցքավորվի մարտկոցը: Հասանելի օպցիաները հետևյալն են.</p> <p>Լիցքավորել, երբ ընդունիչը ՄԻԱՑՎԱԾ կամ ԱՆՋԱՏՎԱԾ է, Լիցքավորել, երբ ընդունիչը ՄԻԱՑՎԱԾ է, Լիցքավորել, երբ ընդունիչն ԱՆՋԱՏՎԱԾ է, Երբեք չլիցքավորել մարտկոցները:</p> <p>Տվյալների գրանցում</p> <p>Ընդունիչը պետք է ունենա ներկառուցված (չհեռացվող) հիշողության կոշտ սկավառակ մինչև 24 Գբ ծավալով, պետք է կարողանա ընդունել արտաքին հիշողության սարք՝ տվյալների գրանցման մինչև 1 տբ ծավալով, պետք է ապահովի տվյալների գրանցման իրական հաճախականություն 100 Հերցը մինչև 600 վայրկյան: Տվյալների գեներացումն արհեստական մեթոդներով չի համարվում</p>
--	--	--	--

				<p>իրական այլընտրանք, պետք է ապահովի 180 Հց-ից ավելի արագությամբ տվյալների գրանցման համակցված հաճախականություն՝ գրանցման բոլոր անկախ սեանսներով, պետք է ապահովի 12 անկախ և համաժամանակյա սեանսներ, պետք է կարողանա թողարկել ինչպես RINEX, այնպես էլ BINEX ֆորմատի ներքին ֆայլեր՝ առանց արտաքին գործիքների/փոխարկիչների անհրաժեշտության:</p> <p>Կոմունիկացիան ինտերֆեյսներ</p> <p>Ընդունիչը պետք է ներառի առնվազն չորս ֆիզիկական սերիական պորտեր: Սերիական պորտերի հաբը կամ ադապտորները, որոնք միացված են ընդունիչի ֆիզիկական պորտերին, չեն կարող համարվել իրական այլընտրանք, պետք է ունենա առնվազն մեկ USB պորտ, որն ապահովում է հեռավար ցանցային դրայվերի ինտերֆեյսի (RNDIS) բնութագրեր՝ սարքի և հոսթի ռեժիմներում, պետք է ունենա WiFi 802.11 b/g կապ՝ հոսթ և մուտքային կետ ռեժիմներ: WiFi կապը պետք է ապահովի WPA/WPA2/WEP64/WEP128 կոդավորում: WiFi կապը մուտքային կետի ռեժիմում պետք է թույլ տա ընդունիչի բոլոր հատկանիշների, դատա ֆայլերի և դատա հոսքերի TCP/IP կոնֆիգուրացիա, պետք է ներառի 2.4 GHz Bluetooth ռադիո, որն ապահովում է մինչև երեք համաժամանակյա կապուղի, պետք ա ունենա կոմունիկացիոն պորտ, որն ապահովում է 10MHz արտաքին հաճախականությամբ մուտք, պետք է ունենա առնվազն տաս եզակի TCP/IP պորտ: «Եզակի» նշանակում է, որ մեկ բազմահաղորդիչ TCP/IP պորտը (որը թույլ է տալիս բազմակի միացումներ) համարվում է միայն 1 TCP/IP պորտ: Յուրքանչյուր պորտ պետք է լինի ամբողջությամբ անկախ կարգավորելի այլ պորտերից և ելքերից, TCP/IP պորտերը պետք է ապահովեն օգտագործողի դատագրամների արձանագրություն (User Datagram Protocol - UDP), կլիենտ և սերվեր կապեր: TCP/IP պորտերը պետք է ապահովեն ծածկագրային պաշտպանություն, պետք է ներառի առնվազն երեք անկախ NTRIP կլիենտներ, պետք է ներառի առնվազն երեք անկախ NTRIP սերվերներ, պետք է ներառի առնվազն երեք անկախ NTRIP քասթերներ, որոնք կապահովեն առնվազն 30 տարբեր NTRIP ծածկագրային մուտեր, պետք ունենա լիովին կարգավորելի FTP սերվեր: Այն պետք է ապահովի FTP REST հրաման:</p> <p>Անվտանգություն</p> <p>Ընդունիչը պետք է ունենա անվտանգ ցանցային կապ (անվտանգ նշանակում է կոդավորված, վավեր սեսիա), ինչպես նաև պետք է ապահովեն տարատեսակ մուտքային աստիճաններ դեպի ընդունիչի հսկիչները, պետք է ապահովի IP ֆիլտրացում մուտքային կապերի համար, պետք է աջակցի TLS</p>
--	--	--	--	---

			<p>v.1.2, պետք է հնարավորություն ունենա լինել կարգավորելի՝ օգտագործելու համար սովորական TLS սերտիֆիկատներ:</p> <p>Համակարգային առանձնահատկություններ</p> <p>Ընդունիչը պետք է ունենա հնարավորություն լինելու կարգավորելի առանց օգտագործելու որևէ տեսակի ծրագրակազմի, որոնք հանդիսանում են այլ կողմերի սեփականություն, պետք է ունենա իր մեջ ներդրված վեր էջի տեսքով ինտերֆեյս և լինի համատեղելի առկա վեբ բրաուզերների մեծ մասի հետ (Mozilla Firefox, Google Chrome և այլն): Ընդունիչի վեբ ինտերֆեյսը պետք է լինի համատեղելի շարժական սարքերի վեբ դիտարկիչների տարբերակների հետ, վեբ ինտերֆեյսը պետք է պարունակի օգնության կամ տեղեկատու հղումներ՝ համատեքստին զգայուն ընտրացանկերի տեսքով:</p> <p>Երաշխիք</p> <p>Ընդունիչը պետք է ունենա առնվազն մեկ տարվա երաշխիք՝ սկսած ձեռք բերման օրվանից, պետք է ունենա ծրագրային ցմահ թարմացումներ՝ առանց տեխնիկական սպասարկման պայմանագրեր գնելու անհրաժեշտության, Պահանջվող բոլոր ֆունկցիաները և հատկությունները պետք է լինեն մշտական:</p> <p>Խեղդողակներով GNSS ալեհավաք մշտապես գործող ռեֆերենց կայանների համար</p> <p>Պահանջվող բնութագրիչները պետք է համապատասխանեն ամբողջությամբ և առանց բացառությամբ վերջին պաշտոնական պրոդուկտին և/կամ ծրագրակազմին, որը թողարկվել է այս տեղերի հայտարարման օրվա դրությամբ:</p> <p>Ստոր ներկայացված հաճախականություններին հետևող գեոդետիկ ալեհավաքներ. GPS: L1, L2, L5; GLONASS: G1, G2, G3; GALILEO: E1, E5ab, E6; BEIDOU: B1, B2, B3;</p> <p>Ալեհավաքը պետք է համարելի լինի հետևյալ SBAS-ներին: EGNOS, WAAS, QZSS, GAGAN, MSAS:</p> <p>Ալեհավաքը պետք է համատեղելի լինի ճշգրտող ծառայությունների հետ, որոնք հեռարձակվում են L-band-ի միջոցով,</p> <p>Խեղդողակի տեսակը՝ մշակված NASA-ի Ռեակտիվ շարժիչների լաբորատորիայի (Jet Propulsion Laboratory - JPL) կողմից, որը նվազեցնում է բազմուղի միջամտությունները:</p> <p>Ֆազային կենտրոնի կայունությունը՝ ավելի լավ, քան 2 մմ-ը, Ֆազային կենտրոնի կրկնությունը՝ ավելի նվազ, քան 1 մմ, Հետևելու նվազագույն բարձրությունը՝ 0 աստիճան, Հետևելու գործնական բարձրությունը՝ < 5 աստիճանից, Ալեհավաքի հզորացում: > 45 db ± 2db. Տրամագիծը՝ առնվազն 35 սմ, Քաշը 4.5-ից պակաս,</p>
--	--	--	--

				<p>Պետք է հասանելի լինի բացարձակ ճշգրտման ֆայլ IGS-ից (ANTEX ֆորմատ), Սնուցվում է ընդունիչի կողմից՝ 3.5-ից 20 Վոլտ հաստատուն հոսանքով, Անվանական դիմադրությունը՝ 50 Օհմ. Ալեհավաքը գործելու է խոնավության, ուժեղ քամիների, ավազամրրիկի և ուժեղ անձրևների պայմաններում, Ջերմաստիճանային դիապազոնը՝ -40°C - +85°C. Խոնավությունը՝ մինչև 100%. Հարվածակայունությունը՝ 1 մետր բարձրությունից կոշտ մակերևույթին, Վիբրացիոն դասը՝ 4 GRMS, պատահական վիբրացիայի պրոֆիլ միայն Z առանցքի վրա, Coaxial միակցիչ՝ N էգ, Մոնտաժային դետալ՝ 5/8” - 11 էգ, Ըստ ցանկության, պետք է հասանելի լինի նաև ալեհավաքի լրացուցիչ արտաքին երեսպատիչ (обтекатель), Ալեհավաքի ճշգրտող ֆայլը և արտաքին երեսպատիչի փաթեթը պետք է հասանելի լինեն IGS-ից (ANTEX ֆորմատ):</p> <p>GNSS ալեհավաքի մալուխ մշտապես աշխատող ռեֆերենց կայանների համար</p> <p>Երկարությունը՝ 30 մետր, Համալիր դիմադրողականությունը՝ 50 Օհմ, Մաքսիմալ հաճախականությունը՝ առնվազն 10 GHz. Կորուստը 1.5GHz-ի վրա՝ 0.2 dB/ր-ից պակաս. Մալուխը աշխատելու է խոնավության, ուժեղ քամիների, ավազամրրիկի և ուժեղ անձրևների պայմաններում:</p>
--	--	--	--	--

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի

սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու գրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Ջարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի դիրքորոշումների և Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ԵՒՍԻ-

ԳՀԱՊՁԲ21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 չափաբաժնի մասով սահմանված Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, ուստի ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա են համապատասխանեցման նշված դրույթների պահանջներին:

Բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին, չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար և չեն բավարարում մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գեո-Նալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ ԳԱԱ «Ա. Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԵԻՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած՝ սույն որոշմամբ արված վերլուծությունների ու դատողությունների հիման վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գեո-Նալ» ՍՊԸ-ի կողմից 08.11.2021թ.-ին ներկայացված ԳԲԲԱ-ԼՕ-2021/103 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԵՍԻ-ԳՀԱՊՁԲ21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



ԼԵՎՈՆ ՕՇԱՆՅԱՆ